Ararat Mirzoyan: «Les deux parties, l'Arménie et l'Azerbaïdjan, ont exprimé leur position l'une face à l'autre, selon laquelle chacune voit des problèmes et des obstacles importants dans la Constitution de l'autre pour l'établissement d'une paix à long terme. Cela ne signifie pas du tout que, par exemple, la question des amendements constitutionnels de la République d'Arménie soit un sujet de négociations entre l'Arménie et l'Azerbaïdjan ou qu'elle fasse partie de l'ordre du jour. Il n'y a pas une telle chose.»

Ruben Rubinyan: «S'il y a une approche constructive de la part de l'Azerbaïdjan, je consi-

dère qu'il est possible de signer l'accord de paix demain. La Constitution de la République d'Arménie, ses amendements ou non-amendements relèvent des affaires intérieures de l'Arménie et ne peuvent pas constituer un programme de négociation.

L'Azerbaïdjan soulève régulièrement cette question depuis 3 ans. Pendant ce temps, en Arménie, on rappelle pour se justifier que les autorités ont commencé à parler d'amendement de la Constitution après 2018. Il y a cependant une différence dans cette affirmation. Au stade initial, il s'agissait de réformes constitutionnelles. Les commissions ont travaillé dans ce sens et même un concept a été préparé. Le 8 janvier de cette année, le ministre de la Justice Grigor Minasyan a annoncé lors de sa conférence de presse que le concept était prêt à être présenté au public.

«Nous avons surtout évoqué les actes de correction des vides juridiques et des situations d'impasse existantes, c'est-à-dire tous les endroits où tout processus juridique s'est retrouvé dans une impasse en raison de réglementations constitutionnelles floues. Nous les avons examinés, nous avons évoqué les pouvoirs du président, c'est-à-dire que nous avons évoqué tout, mais je ne me réserve toujours pas le droit de présenter les dispositions importantes du concept, car nous avons un accord selon lequel nous voterons sur le concept dans sa globalité, une sensibilisation du public aura lieu prochainement.»

Au bout de quelques jours, il s'est avéré que les commissions travaillaient dans la mauvaise direction: soit elles n'avaient pas compris la recommandation, soit les objectifs des changements avaient changé avec le temps. Le 19 janvier dernier, le Premier ministre arménien a donné des éclaircissements au ministère de la Justice.

«Pas de changements constitutionnels, mais une nou-

velle Constitution. Nous devons avoir une Constitution qui rende la République d'Arménie plus compétitive et plus viable dans les nouvelles conditions géopolitiques et régionales.»

Le changement de discours a donné au champ analytique arménien une raison pour des commentaires différents.

Tigran Grigorian: «Avec cette déclaration au ministère de la Justice, Nikol Pachinian, pourrait-on dire, a déclaré presque directement quel était l'objectif. Quand vous dites qu'il ne s'agit pas de changer le modèle de gouvernance, mais d'avoir une loi mère qui correspond de nouvelles réalités régionales, il est clair que tout cela est directement lié au processus de négociation.

Hakob Badalyan: «Aliev n'est pas du tout intéressé par un accord de paix avec l'Arménie. Il fixe l'objectif suivant: soit dicter ses conditions à l'Arménie sans condition et parvenir à un accord qui consacrerait simplement le statut de l'Arménie en tant qu'État décoratif, soit tout simplement ne signer aucun accord et continuer ensuite à jouer sur ce facteur de puissance. Je pense qu'Erevan imagine très bien ces rickshaws. Quel genre de politique il mène et comment il imagine les neutraliser, c'est déjà l'autre côté du problème.»

L'opposition parlementaire a déjà exprimé des doutes sur le fait que le véritable objectif des auditions du 21 juin à l'Assemblée nationale pour organiser un référendum sur l'adhésion à l'UE soit de modifier la Constitution. Selon l'avis du groupe «Arménie» de l'Assemblée nationale, on tentera d'apporter des modifications à la Constitution sous couvert de l'adhésion à l'UE.

Le gouvernement arménien a fixé un nouveau délai pour avoir une nouvelle Constitution. Nikol Pachinian a chargé ses collaborateurs d'élaborer et de présenter un projet de Constitution d'ici décembre 2026.

(Armenews)



# ՏԵՍԱԴԱՇ

## Երբ հանդուրժե՛լը այլևս կը դառնայ անհանդուրժելի

«Ոչ մարդկային լեզուն եւ ոչ ալ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտութիւնը, որ կրած ենք եւ կը կրենք: Մեր հայրենի հողի վրայ մեր կեանքը խաղալիք է դարձած մեր իշխողներու ձեռքին. մեր կեանքը անապահով դրուժեանց մատնուած է, մեր ընտանիքը ամօթաբեր բռնութեանց, մեր զաւակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզմէ կորցելու, մեր զաւակները սովամահ կոտոր[ու]ելու ենթարկուած են, մեր եկեղեցիները կը սրբապղծուին եւ հրոյ ճարակ կը լինին, մեր սրբութիւնները կ'անարգուին եւ մեր հաւատը կը հայհոյուի եւ հոգեւորականութիւնը ենթարկուած է հինգերորդ դարու մեղի ունեցած բոլոր տառապանաց»:

Ո՛չ, այսօր չեն գրուած այս տողերը, որքան ալ ոմանք կրնան ստանալ այդ տպաւորութիւնը...: Անոնք մտքիս մէջ դրոշմուած-մնացած են առաջին ընթացքումէս ի վեր՝ հաւանաբար 60-65 տարի առաջ: Առնուած են խումբ մը արեւմտահայերու կողմէ Մակար կաթողիկոսին գրուած նամակէ մը («Տեղեկագիր Հայկ. Գիտ. Ակադեմիայի», 1946 թ. Թիւ 10, էջ 52), որ մէջբերած է Գ.Գիւզալեան «Հայ յեղափոխութիւնից առաջ» իր յօդուածին մէջ՝ Ս. Վրացեանի կողմէ կազմուած «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան — 1890-1950» հատորին մէջ:

Վերջիչենք նաեւ հետեւեալ տողերը, որոնք քաղուած են խորհրդային օրերու ամենէն ականաւոր այլախոհներէն էլ՝ մտնող Աւետեանի հետ խմբական հարցազրոյցէ մը, որ կայացած էր 1992 մայիս 13-ին, Մոնթրէալի մէջ՝ «Հորիզոն»-ի նախաձեռնութեամբ.

«Մարդ կայ, որ գուրկ է ինքնասիրութիւնից, մարդ կայ, որ համարում է որ սոցիալիզմը պետութիւն է, պետական կազմակերպութիւն է եւ իրաւունք ունի հպատակներէ պահանջելու հնազանդութիւն: Բայց մարդ կայ, որ չի հաշտուում այս մտքի հետ, որ պետութիւնը իրաւունք ունի պահանջելու, որ մենք լինենք հնազանդ նրա չար կամքին: Սոցիալիզմի օրոք չէին հետապնդում մարդկանց, հալածում արարքներ չհամար. հետապնդում էին միայն անհատին. եթէ դու անհատ ես, եթէ դու վտանգ ես ներկայացնում պաշտօնական գաղափարախօսութեան համար, առի-

թը հալածելու, բանտարկելու միշտ կայ: [...] Ուստի այն մթնոլորտը, երբ զգում ես, որ դու հալածուած ես, ոչ թէ որովհետեւ ինչ որ մի արարք ես կատարել, այլ որովհետեւ դու անհատ ես, աւելի շատ է մարդուն ընկճում եւ անյուսալի հեռանկարներ գծում:

«[...] Կայ մարդ, որ ծնած է հերոս. մտնում է անհաշտ պայքարի մէջ, դերադասում է զոհուել, քան հաշտուել չարիքի հետ: Բայց դժբախտաբար, մարդկութեան մեծ մասը հակուած է հաշտուելու իւրաքանչիւր իրականութեան հետ:

«[...] Ոչ ոք չի պահանջում, որ բոլորս լինենք հերոսներ. մենք էլ, ի սէր Աստուծոյ, հերոսներ չենք. գիրք կարդալու եւ ազատամտութիւնը համար պէտք չէ մարդը հերոս լինի: Յիմար էր մեր ԿԳԲ-ն, յիմար էր մեր կենտրոնը, յիմար էին մեր կուսակցական ատեանները, մեր ամբողջ իրաւակարգը, որ մարդուն, ազատ խօսելու համար, ընդ որում մենք կոչ չէինք անում անհրաժեշտ գործողութիւնների, ընդամենը իր կարծիքը յայտնելուն համար եւ գիրք կարդալուն համար ուղարկում էին բանտ եւ խնեթանոց: Դա ցոյց է տալիս պետութեան թուլութիւնը: Հպատակները, փոխանակ օգտագործեն այս թուլութիւնը եւ իրենց իրաւունք տան ազատ խօսելու, կապանքներ էին դնում իրենց բերանի եւ վերջին հաշուով իրենց մտքի վրայ, յարմարում էին ամեն ինչի՝ իմանալով, որ կոմունիզմը պատրանք է, որ կոմունիզմը հնարուած մի բան է, չհաւատալով, նոյնիսկ չիմանալով, թէ ինչ բան է սոցիալիզմը, ինչ բան է կոմունիզմը, չիմանալով պատմութիւնը» — Տես «Հորիզոն» («Հորիզոն գրական»), «25 տարի ետք — Անմոռանալի ասուլիս մը 15-ը մտնող Աւետեանին հետ», ինչպէս նաեւ «Ուստայն 15 — Զրուցապատում»:

Յստակ է, որ ուրիշ ժամանակներու կը վերաբերին այս մէջբերումները, սակայն այնտեղ նշուած երեւոյթներէն մէկը՝ գլխաւորը, այն է, որ մենք հանդուրժած ենք այդ բոլոր չարիքները: Հանդուրժած ենք երկար ժամանակ, չենք ըմբոստացած: Գլուխ ծռած ենք, «եռլա գացած» ենք, գուցէ միշտ յուսալով, որ հրաշքով բան մը կը փոխուի: Այլապէս՝ երկիրը ձգած-գացած ենք՝ մեր սեփական գլուխը ազատելու համար:

Զանգուրծելու եւ առկայ իրավիճակին դէմ ըմբոստանալու ամենէն յիշատակելի իրողութիւնը մեր ազգային կուսակցութիւններու յառաջացումն է ժԹ. դարու վերջին տարիներուն՝ 1885 — 1890, եւ առ այդ ալ չեմ կրնար չյիշատակել նաեւ «ՀԹԴ մանիֆեստը», որմէ ալ կ'արժէ մէջբերել քանի մը տող.

«Հայը, որ դեռ երէկ, շլինքը ծռած, Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով, որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը, ընտանիքը...

«[...] Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները, բայց հայը կրել է այդ բոլորը, կրել է համբերութեամբ՝ շարունակելով ողողել հայրենիքի հողը իր քրտինքով: Դարերի ընթացքում կարծէք թէ հայը կամեցաւ ապացուցանել մարդկութեանը, թէ կարելի է ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով:

«[...] Բայց համբերութիւնն էլ ունի իւր սահմանը:

Եւ վերջապէս եզրակացութիւնը՝ «Համախմբուենք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը» — Տես միշտ Ս. Վրացեանի կազմած «Վաթուհամեակ (1890-1950)» հատորը:

Ընթերցողը պիտի հասկնայ, որ այս բոլորը կը վերջիչեն ի տես մեր երկրի ներկայ իրավիճակին, որուն մտահոգիչ, ազգակործան, վհատեցուցիչ երեսները այնքան ցայտուն են, որ կարիք չկայ որեւէ գուհահեռ ներկայացնելու:

Մինչեւ տեղ մը տակաւին կրնամ փորձել հասկնալ վախը, զաւակ կամ ծնողը կորսնցնելու, անեկամուտ մնալու մղձաւանջները՝ գուցէ համակերպելով նոյնիսկ ամբողջ երկիրը թշնամիին յանձնելու վարկածին ալ:

Ի՞նչ հանդուրժողականութիւն է այս, սակայն, որ ինքնին կը դառնայ ամենէն անհանդուրժելի երեւոյթը...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

## Ոստիկանութիւնը լուսաձայնային և նոնակներ արձակեց ցուցարարներուն վրայ. Կան բազմաթիւ վիրաւորներ

Ընդառաջելով «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումի առաջնորդ Բագրատ արք. Գալստանեանի՝ օր մը առաջ ուղղած կոչին՝ 12 Յունիսին, ժամը 3էն սկսեալ, Ազգային ժողովին դիմաց հաւաքուելու, մեծաթիւ հետեւորդներ համախմբուեցան ճշգրտած վայրին մէջ, ուր տեղակայուած էին արդէն ոստիկանական եւ ապահովական մեծաթիւ ուժեր: Մինչ այդ, Ազգային ժողովին մէջ կառավարութեան հետ հարցում-պատասխան օրակարգը կը գործադրուէր:

Բագրատ սրբազանը պահանջեց հանդիպում ունենալ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ՝ քննարկելու անոր «խաղաղ եւ անցնցում ճանապարհով հեռացման» պայմանները:

«Այս կառավարութեան ղեկավարն իր ողջ կազմով պէտք է հեռանայ: Այսօր այդ վճռականութեամբ պարտաւոր է հանդիպել եւ քննարկել իր խաղաղ, անցնցում հեռացման պայմանները», յայտարարեց ան՝ դիտել տալով, որ վարչապետին հեռացումը պիտի կատարուի օրինական ճամբով, առանց բռնութեան, եւ որ իրենք պիտի չպաշտարեն խորհրդարանի շէնքը, այլ պէտք է արգելափակեն Նիկոլ Փաշինեանի ելքը. «Որովհետեւ պետութիւնը ձախողած մարդը չի կարող հանգիստ-հանգիստ գործի գալ, գործից գնալ, ուղղակիորէն չանդարաւորնալ այն ամբողջ ընդվզումին եւ ցաւին, որ իր պատճառով պատճառուել է ժողովրդին», պնդեց սրբազանը:

Բագրատ սրբազանը նաեւ վերջիչեցուց, որ իշխանաւորներուն ըրածը ո՛չ սահմանազատում է, ո՛չ ալ սահմանազծում է, իրենք հարկադրանքի տակ յանձնած են հայկական հողերը: Իսկ ծաղաղութեան պայմանագիրին մասին ան ըսաւ հետեւեալը. «Խա-

ղաղութեան պայմանագիրը մենք պէտք է բերենք, ոչ թէ այս մարդիկ, այս մարդիկ խաղաղութիւն են մուրում, ուղղակի դռնէ դուռ ընկած մուրում են: Նրանք այնտեղ ասում են սահմանադրութիւնը փոխէք, սրանք այնտեղից ասում են՝ մէկ ամսից կարող ենք խաղաղութիւն կնքել, սա ի՞նչ է, բանակցութիւն էք համարում»:

Իրավիճակը խորհրդարանի յարակից տարածքին մէջ լարուեցաւ, երբ Բագրատ սրբազան առաջարկեց ճամբայ բանալ, որպէսզի պատգամաւորները կարենան ներս մտնել: Հրմշտուք եւ քաջքուք ծայր առաւ:

Ոստիկանութիւնը յանկարծ լուսաձայնային նռնակներ արձակեց ցուցարարներուն ուղղութեամբ՝ մուրի եւ ուժգին ձայն պատճառելով, ինչպէս նաեւ վիրաւորելով առաւել քան 79 անձեր, որոնց կարգին լրագրողներ եւ լրատուամիջոցներու աշխատակիցներ, իսկ ծանրորէն վիրաւորուեցաւ տղամարդ մը, որուն դաստակը անջատուեցաւ ձեռքէն: Վիրաւորներուն կարգին էր նաեւ լրագրող, Աբրահամ Գասպարեան, որ նաեւ ձերբակալուեցաւ:

Ոստիկանները նաեւ սկսաւ Դեմիրճեան-Պոռչեան խաչմերուկէն ձերբակալել շարժումին մասնակցողներ, հակառակ Բագրատ սրբազանի կոչին՝ «դադարեցնելու անօրինական գործողութիւնները եւ մարդիկ անիմաստ բերման չենթարկելու»:

Ըստ վերջին տուեալներուն՝ ձերբակալուած անձերու թիւը հասաւ 100ի:

Կացութիւնը հանդարտելէ ետք, շարժումին հետեւորդները դարձեալ համախմբուեցան Բաղրամեան պողոտային մէջ:

«Ասում էին՝ այս մարդն արիւն է ուզում, մտքով

լսել եմ, սրտով չեմ հաւատացել, բայց այո՛, արիւն է տնջում: Մեզ դարձրին մեր նուաճած ժառանգութեամբ կարօտով ապրող ժողովուրդ եւ դեռ կարողանում են երեսները բաց խօսել: Այս մարդը պէտք է հեռանայ, այլ տարբերակ չկայ: Մենք ոչ մի քայլ չենք նահանջելու, ուզում է 100 հազարանոց ոստիկանական շարք լինի: Ուր ուզում ես փախի, պէտք լինի մենակով կը գանք, պէտք լինի ժողովրդով կը գանք, պէտք լինի էշով կը գանք, պէտք լինի մետրոյով կը գանք: Խնդիրը շատ պարզ է՝ այս մարդը պէտք է հեռանայ, այլ տարբերակ չկայ: Մենք ոչ մի քայլ չենք նահանջելու, ուզում է 100 հազարանոց ոստիկանական շարք լինի: Նռնակներ էք նետում, այս քայլն ամէն ինչի վերջն էք», ըսաւ Բագրատ սրբազանը:

«Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումը նաեւ տեղեկացուց, որ իրարանցումին մէջ առեւանգուած է «ժողովրդավարական համախմբում» կուսակցութեան նախագահ, «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժման առաջնորդներէն Սուրէն Պետրոսեանը: Ըստ կարգ մը ականատեսներու՝ քաղաքացիական հազուատներով 4 անձեր զայն տարած են անյայտ ուղղութեամբ:

Աւելի ուշ, Բագրատ սրբազանի կոչով՝ շարժումին հետեւորդները ուղղուեցան դէպի կառավարութեան շէնքը: «Ըստ մեր տեղեկութիւնների, Փաշինեանը գնացել է կառավարութեան շէնք. շարժումն ենք այնտեղ: Եթէ այնտեղ նպատակայարմար չլինի, վերադառնալու ենք այստեղ: Վաղն առաւօտեան ժամը 10ին կառավարութեան նիստ է. մէկ մարդու պէս պէտք է ժամը 9ին լինենք այնտեղ», յայտարարեց Բագրատ սրբազանը:





# Սրբազան Պապարին Գերքին տրամաբանութիւնը

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Մօտաւորապէս 3 ամիս առաջ Տաւուշի մէջ ստեղծուեցաւ «Տաւուշը յանուն հայրենիքի» շարժումը: Անունը ամէն ինչ կը բացատրէ:

Շուտով այս շարժումը ստացաւ «Սրբազան պապար» անուանումը, ոչ թէ անոր համար որ զայն առաջնորդողը հոգեւորական մըն էր (այս պարագային՝ Գանատայի թեմի նախկին եւ Տաւուշի թեմի ներկայիս առաջնորդ Բագրատ արք. Գալստանեանը), այլ որովհետեւ, պապարը, շարժումը կը միտէր սրբելու, մաքրելու այն կեղտը, որ կուտակուած էր մեր երկրին մէջ, զայն գետեղելով կործանումի ընթացքի մէջ:

ՌԱԶՄԱԴԱՇ ԵՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ի մասսայական զօրապետը, երբ կը ծրագրէ իր մղելիք մարտը, ինք կ'ընտրէ ռազմադաշտը: Թշնամիին կը պարտադրէ կուռելու ի՛ր իսկ որոշած ռազմադաշտին վրայ:

Սրբազան պապարը, առաջնորդութեամբ Բագրատ սրբազանին, ինք ընտրեց իր ռազմադաշտը: Այդ ալ գաղափարական եւ բարոյական դաշտն էր ու ոչ թէ զուտ քաղաքական բանավէճի ու հակամարտութեան:

Աւելի քան երկու ամիս առաջ, Հայաստանի խորհրդարանէն ներս, տեղի ունեցան նիստեր, որոնց օրակարգը կառավարութեան կատարողականն էր. այսինքն՝ ՔՊ-ական կառավարութիւնը հաշիւ պիտի տար, թէ անցնող համապատասխան ժամանակաշրջանին, ինչ իրագործած էր իր ներկայացուցած ծրագիրներէն:

Խորհրդարանական ընդդիմութիւնը («Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» դաշինքները) համադրուած փաստերով, ապացոյցներով, ու նոյնինքն կառավարութեան մշակած ծրագիրներէն մէջ բերումներով բզկի-բզկի ըրաւ իշխանութիւնը: Օրինակ՝ ըստեցաւ, թէ իշխանական կուսակցութիւնը իր նախընտրական խոստումներուն մէջ Արցախի մասին «Անջատում յանուն փրկութեան» եւ «Արցախի դէ-օկուպացիա» խոստացած ու նոյնութեամբ ներառած էր կառավարութեան ծրագրին մէջ, որուն հիման վրայ ալ ստացած էր ԱժԻ վստահութեան քուէն. սակայն ատկէ վերջ, իշխանութեան ղեկավարը Փրակայի մէջ յայտարարած էր, թէ Արցախը կը ճանչնայ իբրեւ Ատրպէյճանի մաս (հետեւանք ծանօթ է բոլորիս): Ու բազմաթիւ այլ օրինակներ եւս:

Տարբեր խօսքով, ընդդիմութիւնը այդ նստաշրջանին չոր ապացոյցներով երեւան հանեց այս իշխանութեան արդէն իսկ բացայայտ սուտերն ու կեղծիքները, որոնք աննախընթաց ազատ յանգեցուցած էին մեր ազգը ( Ի դէպ,

այնպէս չէր, որ այս իշխանութիւնը կը փայլէր իր պարկեշտութեամբ. բոլորս լաւ կը յիշենք, թէ 2018ի իրենց հաւաքներէն մէկուն ընթացքին կեղծեցին նոյնիսկ նահատակ հերոսի մը պապիկը...):

Իսկ ի՞նչ պատասխանեց գործադիր իշխանութիւնը:

Բովանդային առումով՝ ոչինչ, կատարելապէս ոչինչ: Փոխարէնը՝ լուտանքներ «նախկիններուն» հասցէին, «ձեր օրերուն դո՛ւք ինչ ըրիք» մանկապարտէզի մակարդակի հակադարձութիւններ, ջղազրգիւ ճշտցներով ու ճղճոցներով ընկերացող բառախաղեր, ու անվերջ manipulation-ներ: Այս բոլորը՝ հեռատեսիլային ուղիղ սփռումով, հանրութեան աչքերուն դիմաց:

Այս խորապատկերին վրայ, Սրբազան պապարին առաջնորդ Բագրատ սրբազանը իր բոլոր հրապարակային ելոյթներուն մէջ խօսեցաւ այս իշխանութեան ստախոսութեան, կեղծաւորութեան ու անգրագիտութեան մասին: Ան անդադար հանրութեան շեշտեց, թէ սուտն ու կեղծիքն են այս իշխանութեան միակ յենարանները, ու հետեւաբար, իբրեւ ենթաթեքստ, պէտք է մաշեցնել անոր հիմքերն ու յենարանները:

Փոխարէնը՝ Բագրատ սրբազանը առաջադրեց մասնագիտական մարդու գործի լծելով երկրի արդար կառավարում, ներքին հաշտութիւն, վերջ տալ ատելութեան խօսքին, որ օրական 24 ժամ իշխանական հարթակներէն կը լսուի ու կը տարածուի՝ սկսելով առաջին հերթին հանրային Հ1 ալիքէն, մասնակցութեամբ այլ իշխանամէտ թութակ-ալիքներէն ու լրատուամիջոցներէն, ու այս բոլորը՝ պետական գումարներով:

Տրուած ըլլալով, որ ատելութեան խօսքով յազեցած իշխանական քարոզչութիւնը աւեր կը գործէ այսօր մեր հանրային կեանքէն ներս (մինչեւ իսկ ընտանիքներէ ներս ներքին խզումներ յառաջացնելով), Բագրատ սրբազանը անդադար կը կրկնէր հանրային համերաշխութեան անհրաժեշտութիւնը, առաջին հերթին ատելութեան խօսքին վերջ դնելու պահանջով:

Սրբազան պապարը Բագրատ սրբազանին բերնով բանաձեւեց 3 հիմնական պահանջներ:

- 1) Առաջին հերթին վերջ տալ սուտի ու կեղծիքի տիրապետութեան՝ ներկայ իշխանութեան հրաժարումով,
- 2) Մասնագէտներէ բաղկացած նոր կառավարութեան կազմութիւն, եւ
- 3) Նոր ընտրութիւններ, որոնց պիտի չմասնակցին նոր կառավարութեան անդամները:

Կարեւոր է շեշտելը, թէ պապարը նաեւ իր շուրջ համախմբեց նախկին



դիւանագէտներ, արտաքին գործոց նախարարութեան նախկին բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնք արտաքին յարաբերութիւններու մշակման մէջ տասնամակներու փորձառութիւն կուտակած էին: Այս խումբը մէկը աւելի առիթներով, հանրային հարթակներէն ներկայացուց այս նոր, գալիք իշխանութեան արտաքին քաղաքականութեան ընդհանուր ուղղութիւնները, որոնք հիմնուած են բացառապէս հայկական օրակարգի, Հայաստանի պետական շահերը գերիվեր համարելու սկզբունքին վրայ՝ ի հակադրութիւն ներկայիս տիրող այն խառնաշփոթին, որ իշխանութեան ներկայացուցիչները լուրջ դժգոհութիւն կը կոչեն «արտաքին յարաբերութիւններ»:

Սրբազան պապարի կարեւոր առաջադրանքներէն մէկն ալ ընկերային-տնտեսական արդար կարգերու հաստատումն է, ուր պիտի դադրին շահագործումն ու չարահամբերը, մարդիկ իրենց իրենց աշխատանքին դիմաց պիտի ստանան արդար վարձատրութիւն եւ հետեւաբար նաեւ՝ պիտի ունենան արժանապատիւ կեանք:

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Տրուած ըլլալով, որ Քպ-ական այս իշխանութիւնը ոչ ըսելիք, ոչ ալ ընելիք ունի գաղափարական դաշտէն ներս, փորձեց այս շարժումը ներքաշել Ֆիզիքական բախումներու մէջ, օգտագործելով ոստիկանական-դատախազական-դատական ամբողջ համակարգը:

Այսպէս, մօտաւորապէս ամիս մը առաջ, երբ Սրբազան պապարի համախոհները, գլխաւորութեամբ Բագրատ սրբազանին, հաւաքուած էին արտաքին գործոց նախարարութեան շէնքին դիմաց՝ ոստիկանութիւնը եւ ներքին զօրքերը հրմշտուք ու ապա բախումներ հրահրեցին: Բազմաթիւ անձեր բերման ենթարկուեցան, ապա՝ դատական կարգով ձերբակալուեցան «խուլիգանութեան» մեղադրանքով, ներառեալ նախկին փոխնախարար Աշոտ Յարութիւնեանը, որ մինչ այդ կանգնած կը հետեւէր իրարանցումին՝ տեսանկարահանող գործիքներու դիմաց քաշկուտուեցաւ եւ տարուեցաւ: Շարժումը չ'ինկաւ բախումներու՝ իշխանութեան լարած որոգայթին մէջ:

Յաջորդ օրը, նոյն զօրքերը Հ.Յ.Դաշնակցութեան Գերագոյն մարմնի նախագահ Աշոտ Սիմոնեանը 25-30 հոգիով խոշտանգեցին՝ ԳՄ-ի շէնքին դիմացն իսկ, յուսալով որ բռնութեան մէջ կը ներքաշեն դաշնակցականները: Իշխանութեան այդ փորձը եւս ձախողեցաւ:

Եւ վերջապէս, Յունիսի 12ին, երբ հազարաւոր ժողովուրդ հաւաքուած էր ԱժԻ շէնքին մօտ, ուժայինները դարձեալ հրմշտուք-բախում ստեղծեցին ու

ապա՝ աւելի քան 20 լուսաձայնային ձեռնառումներ նետեցին բազմութեան մէջ, խոշտանգեցին լրագրողներ, ջարդեցին անոնց նկարահանող գործիքները: Եղան մօտ 100 վիրաւորներ (ըստ ոստիկանութեան՝ նաեւ քանի մը ոստիկաններ):

Բայց ժողովուրդը ոչ միայն խոյս չտուաւ դէպքին վայրէն (ինչպէս կը յուսար իշխանութիւնը), այլ աւելի՛ բազմացաւ: Այս կէտը շատ կարեւոր է, որովհետեւ փաստօրէն Բագրատ սրբազանին գաղափարական պապարի շեշտադրումները ամրապնդած են մարդոց հաւատքն ու կամքը, առանց տարիքի ու սեռի խտրութեան:

Կարեւոր է ընդգծելը, թէ Շարժման մասնակիցներուն մէջ աչքաուտ սոկոս կը կազմեն երիտասարդներն ու իգական սեռը (իր տարիքային բոլոր շերտերով): Իսկ Յունիսի 12ի «ռաբակոնմին», իգական սեռին ոչ իսկ մէկ ներկայացուցիչ խոյս տուաւ:

Իշխանութիւններու մանկապարտէզի մակարդակի մտայնութեան արտայայտիչն էին այն դրուագները, ուր հրմշտուք-բախումներուն ընթացքին, ոստիկանները կը հայհոյէին ժողովուրդին ու անոր կողմէ նետուած ջուրի «փլաթիք» շիշերը կը նետէին ժողովուրդին ուղղութեամբ:

ԱՅՍՕՐ

Ներկայիս, Սրբազան պապարը կը գտնուի իր վերակազմակերպումի փուլին մէջ: Տուեալները ցոյց կու տան, որ Բագրատ սրբազանը, իբրեւ այս շարժումին առաջնորդը, կ'աշխատի հանրութեան բոլոր շերտերը համախմբելու սկզբունքով: Այսինքն, հանրութեան բոլոր շերտերուն հետ (գործարարներ, զանազան մասնագէտներ, իրաւաբաններ, երիտասարդներ) երկխօսութիւն ստեղծելով, առաջ մղել ներքին համերաշխութեան միջոցառում, ընդգէմ սուտին ու կեղծիքին, որ ինչպէս ըսինք այս իշխանութեան յենարաններն են:

Այս գաղափարական դաշտը ընդարձակելու եւ ամրապնդելու համար, յառաջիկայ քանի մը շաբաթները կրնան վճռական ըլլալ Հայաստանի ու հայութեան համար:

Կը մնայ մէկ կեանք. Սփիւռքը պիտի դադրի գիտողի դերին մէջ մնալէ ու իր յարմար տեսած եղանակներով պարտաւոր է ոչ միայն զօրակցելու, այլեւ մասնակցելու այս գաղափարական պապարին ու շարժումին:

Որովհետեւ Հայաստանի փրկութեան ծանր պարտականութիւնը միայն հայաստանաբնակներուն պարտականութիւնը չ'է:

23 Յունիս 2024  
Երեւան

**Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝**

**ՎԱՆԳՈՒՎԱՐ-** «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM  
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

**ԼԱՒԱԼ-** «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM  
ACC Laval Radio Program  
Շաբաթ եւ Կիրակի առաւօտեան ժամը 7:30-9:00

**ՍՈՆՅՐԵԱԼ-** «Վանայ Ձայն» 1450 AM  
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

**ՀԱՍԻԼՈՐԵՆ-** «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM  
Կիրակի առաւօտեան 10:00-11:00  
cfmu.mcmaster.ca



# Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի 2023-2024 տարեշրջանի ամապերջի հանդէսներ



Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին համար Յունիս 2024-ը տօնական ամիս էր, որուն ընթացքին տեղի ունեցան «Պապայեան» մանկապարտէզի, «Գոլոլեան» նախակրթարանի եւ «Լափոյեան» երկրորդական վարժարանի ամապերջի հանդէսներն ու վկայականներու բաշխումները, ներկայութեամբ ծնողներուն, ուսուցչակազմին, պաշտօնէութեան, համայնքի ներկայացուցիչներուն եւ հանրութեան:

Ուրբաթ, 7 Յունիսին, երեկոյեան ժամը 5:30-էն սկսեալ եռուգեր էր Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի մուտքին: 48 մանուկներ, իրենց ծնողներուն ընկերակցութեամբ, ժամանեցին կեդրոն, ուրախ եւ խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով:

Ձեռնարկը սկսաւ «Համազգային» թատերասրահին մէջ, յիշատակի նկարներու յարակցումով մը, որ կը ներկայացնէր Միլ կարգէն մինչեւ Մաղիկ կարգի մեր աշակերտներուն գործունէութիւնը: Մինչ հանդիսատեսը սուղուած էր յիշատակներու ծովին մէջ, 48 շրջանաւարտ ծաղիկները կը շարունակէին բեմին վրայ, վարագոյրներու ետին: Կ'աւարտի ներկայացումը: Կը հնչեն Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները, ու ապա վարժարանի տնօրէն Բաֆֆի Սարգսեանը կ'ողջունէ ներկաները եւ պաշտօնապէս բացուած կը յայտարարէ հանդէսը: Կը բացուի վարագոյրը: Շրջանաւարտները մեզ կը դիմաւորեն իրենց անմեղ ժպիտներով եւ յայտագիրը կը բանան «Հայր Մեր» աղօթքով: Ապա հայերէն լեզուով կ'երգեն «Նաղաղութիւն» երգը եւ կ'ամուսնեան «Երազ մը» բանաստեղծութիւնը: Անգլերէն լեզուով կը ներկայացնեն «On My Way» եւ «One Small Voice» երգերը եւ «45 Wish» եւ «We Are Graduating» ամուսնեանը: Իսկ Ֆրանսերէնով կ'երգեն «Ainsi font, Il etati un Petit Navire, Au Revoir les Copains» երգը: Հանդէսի առաջին բաժինը կը փակուի «Հրաժեշտ Մանկապարտէզին» երգով:

Փոխ-տնօրէն տիկին Զէլա Գաբուսեան բեմ կը հրաւիրէ մանկապարտէզի ուսուցիչները եւ անոնց կը նուիրէ ծաղիկներ: Ծնօրէն Բաֆֆի Սարգսեանի, փոխ-տնօրէն Զէլա Գաբուսեանի եւ ծաղիկ կարգի ուսուցիչներու ձեռամբ կը կատարուի վկայականներու բաշխումը:

Կրթական խորհուրդի ատենապետ տիար Վազրիկ Շարապխանեան շնորհակարանքի խօսք ուղղեց շրջանաւարտներուն, ծնողներուն եւ ուսուցիչներուն:

Ապա բեմ հրաւիրեց բազմավաստակ կրթական մշակ, 33 տարիներ վարժարանիս մանկապարտէզի մէջ հայոց լեզու դասուանողած, սերունդներ դաստիարակած, բոլորին սիրելի տիկին Սօսէ Տէրտէրեանը: Ան պարզեւատրեց զինք ապակեայ գնահատագիրով եւ Մայքըլ Արամի ձեռամբ պատրաստուած յուշամետաղով, որուն վրայ պատկերուած էր ՀՕՄ-ի զինանշանը՝ շրջապատուած մանուկներով: Իր կարգին, պարզեւատրեալ փոխանցեց իր սրտի խօսքը, նշելով յիշատակելի դէպքեր եւ զարգացումներ, շնորհակալութիւն յայտնեց բոլոր նախկին եւ ներկայ տնօրէններուն եւ պաշտօնակիցներուն եւ ապա յայտնեց, որ պիտի կոչուի հանգստեան: Հանդիսատեսները յոտնկայս ծափողոյններով իրենց գնահատանքը յայտնեցին տիկին Տէրտէրեանի տարիներու վաստակին:

Այսպէս, ծաղիկները հրաժեշտ տուին մանկապարտէզի ջերմ կեանքին եւ ուրախ խղերուն, եւ ցոյց տուին իրենց պատրաստակամութիւնը՝ անցնելու նախակրթարանի Ա. Գասարան՝ հայկական պարով:

Սը. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Տէր Վարդան Մ. Վրդ. Թաշճեանի սրտի խօսքով ու «Պահպանիչ»ով վերջ գտաւ հոգեթով հանդիսութիւնը:

Յաջորդող Ուրբաթ օր, 14 Յունիսին, «Գոլոլեան» նախակրթարանի ընթացքը աւարտող 40 աշակերտներու «Համազգային» թատերասրահ հանդիսաւոր մուտքով եւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներու յոտնկայս ունկնդրութեամբ տեղի ունեցաւ վարժարանի 8-րդ կարգի հանդէս-վկայականներու բաշխումի երեկոն: Ձեռնարկը կը հանդիսավարէր վարժարանիս հայերէն լեզուի եւ գրականութեան վաստակաշատ ուսուցիչ տիկին Սիւզի Մելիտոնեանը:

Շրջանաւարտները հանդէս եկան եղիշէ Չարենցի «Ես Իմ Անուշ Հայաստանի» բանաստեղծութեամբ, նուիրուած մեր աննման հայրենիքին: Երախտիքի խօսքեր արտասանեցին հայերէնով՝ Սեւան Սարգսեան, անգլերէնով՝ Ալինա Կրըշօն եւ Ֆրանսերէնով՝ Լիանա Շամահեան:

Ծնօրէնութեան խօսքը փոխանցեց տնօրէն Բաֆֆի Սարգսեան, որ յայտնեց, թէ վարժարանիս համայնքը իր յաջողութիւններու բաժինը կը պարտի «աննման, ժրջան եւ նուիրուած անձնակազմին»: Սարգսեան լուսարձակի տակ առաւ հեռատես եւ նուիրեալ համայնքի ղեկավարներու տեսիլքն

ու աշխատանքը, որով հիմը դրին այս վարժարանին:

Ապա, 8-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ մրցանակ-վկայականներու բաշխումը:

Կրթական խորհուրդի ատենապետ տիար Վազրիկ Շարապխանեան շնորհակարանքի խօսք ուղղեց շրջանաւարտներուն, ծնողներուն եւ ուսուցիչներուն:

Տէր Տաթև Աւագ Քահանայ Միքայէեան արտասանեց իր սրտի խօսքն ու «Պահպանիչ»ով աւարտեց զայն:

Շրջանաւարտներու հանդիսաւոր ելքով փակուեցաւ հանդիսութիւնը:

Եւ վերջապէս, 21 Յունիս, երեկոյեան ժամը 7:00-ին, Մանկապարտէզի եւ նախակրթարանի վկայականներով արդէն զինուած, եւ երկրորդական վարժարանի ընթացքը աւարտած 29 երիտասարդներ, շաբաթ մը ամբողջ հետեւելով երկրորդական կարգերու հայ գրականութեան եւ հայ դատի ուսուցիչ տիկին Աշխէն Մալխասեանի ցուցմունքներուն եւ ուսուցողութեան, հանդիսաւոր մուտքով շարունեցան Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի «Համազգային» թատերասրահի բեմին վրայ: Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներէն ետք, տիկին Մալխասեան ողջունեց ներկաները եւ հաստատեց ներկայութիւնը ՅՅԿ Կեդրոնական Կոմիտէի եւ «Ս. Թէշլիբեան» կոմիտէի, հոգեւոր հայրերու, Հայ կեդրոնի յարակից միութիւններու, ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիւղի ներկայացուցիչներուն եւ բարերարներուն: Մալխասեան յայտնեց, որ այս 29 երիտասարդները «մեր աչքերուն առջեւ կազմաւորուեցան եւ դաստիարակուեցան իբրեւ տիպար քաղաքացիներ ու հայրենասէր հայեր եւ այսօր հաստատ քայլերով պիտի շարունակեն իրենց երթը դէպի նորանոր բարձունքներ»:

Շրջանաւարտները հանդէս եկան Մուշեղ Իշխանի «Հայ Հոգին» եւ Անդրանիկ Ծառուկեանի «Ուխտ Արարատին» բանաստեղծութիւններով: Հրաժեշտի ուղերձներ արտասանեցին հայերէնով՝ Իզապէլ Ակոբ, անգլերէնով՝ Ուինոյա Իսկէնտէրեան եւ Ֆրանսերէնով՝ Սարին Գաբրիէլեան:

Բեմ հրաւիրուեցաւ տնօրէն Բաֆֆի Սարգսեան: Ան նշեց, որ այսօրուան ստանալիք վկայականներով շրջանաւարտները կը միանան ծանր պատասխանատուութիւններ կրող այն փաղանգին, որ իր յաճախած միջավայրերուն մէջ կը դառնայ Հայ ազգի ու

դատի առաքեալը եւ իր յաջողութիւնները միշտ կը ծառայենք ազգի վերելքին, շեշտելով որ այդ հոգիով Թորոնթոյի համայնքը կրցած է գոյատեւել: Սարգսեան վերջիջեցուց, որ անցեալ աւարտական հանդէսին վարժարանը ստեղծեց աւանդութիւն մը՝ յաջորդական հունձքերը անուանելու Հայրենիքի տարածքներու անուններով, ամրապնդելու մեր շրջանաւարտներու պահանջատէր ոգին: «Վկայելով ձեր տարիներու ընթացքին ցուցաբերած ազգանպաստ գործերն ու ձեր բուռն հայրենասիրութիւնը, տպաւորուելով ձեր նուիրուածութեամբ եւ կամաւոր ոգիէն եւ քաջ գիտնալով որ ձեր մէջ կ'ապրի եւ կը շարունակէ ծաղկիլ հայու հօգի հոգին, որուն յառաջ դուք պիտի սաւառնիք արիւրաւ դէպի ազգային եւ անձնական կեանքի մարտահրաւէրներու դիմաց, ձեր հունձքը, 45-ամեակի հունձքի կողքին, կ'անուանենք «Սարգարապատ» հունձք: Մեր ժողովուրդը կարիքը ունի նոր Սարգարապատի, որուն յաղթերով նաեւ կ'առաջնորդուինք այսօր: Ձեր կեանքի ընթացքին միշտ յիշեցէ՛ք, որ դուք վերապրած ժողովուրդի շառաւիղներն էք եւ դուք ձեզ կը ճանչնաք որպէս նոր Սարգարապատ եւ չընկաք, միշտ կաք, դեռ կը դաք, երբ տան զանգը, ահագանգը, մեր հոգու պարտքը պիտի տանք», յայտարարեց Սարգսեան:

12-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ Մրցանակ-վկայականներու բաշխումը:

Խօսք առաւ կրթական խորհուրդի ատենապետ տիար Շարապխանեանը, շնորհակարանքով շրջանաւարտները, ծնողները եւ ուսուցիչները:

Սը. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Վարդան Մ. Վարդապետ Թաշճեանի սրտի խօսքէն եւ օրհանքէն ետք հնչեց «վերջին զանգ»ը, «Սարգարապատ» հունձքի շրջանաւարտները նետեցին իրենց գլխարկները, վերջին անգամ ըլլալով նկարուեցան ուսուցիչներուն հետ ու սրահէն դուրս ելլելով բարձր թռիչքով, հայու հոգիով, հայու առաքելութեամբ ու հայու հպարտութեամբ հրաժեշտ տուին վարժարանին՝ ուղուելու դէպի լուսաշող ապագայ:

ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարան  
Լուսանկարները՝  
Իշխան Ղազարեանի

Տարածեցէք ձեր «հորիպոն»ը

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամէնօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website  
[www.arsarmenianschool.ca](http://www.arsarmenianschool.ca)



«Անահիտ» երաժշտանոցի ամսվերջի համերգը



Ինչպես ամեն տարի, այս տարի եւս, 12 Յունիս 2024-ին, տեղի ունեցաւ «Անահիտ» երաժշտանոցի տարեկան համերգը, Թորոնթօ, Գանատա:

Տիկին Անահիտ Կուստուզեանի աշակերտները 29 տարիներու ընթացքին ունեցած են զանազան համերգներ, օգնելու Հայաստանի մանկատուններուն (orphanages)՝ հոգալու երեխաներուն անմիջական ծախսերը, ինչպէս՝ Հայաստանի մէջ Նիկողայոս Տիգրանեանի անուան դպրոցի տեսողութենէ զուրկ տաղանդաւոր աշակերտներուն բժշկական օգնութիւնը, Պրէյլ (Braille alphabet) յատուկ գիրքերու եւ այլ պարագաներու ապահովումը:

«Դրօշ Եռագոյն» տեսահոլովակը, կազմակերպուած տիկին Անահիտ Կուստուզեանի կողմէ եւ իր մասնակցութեամբ, ինչպէս նաեւ իր աշակերտներուն, Թորոնթօյի հայ երիտասարդ երգիչներու, հանրաճանաչ «Սասուն» պարախումբին եւ հանրայայտ երաժիշտներու, իւրայատուկ բարեգործական ծրագիր էր, նուիրուած 2020 թուականի պատերազմէն ծանրօրէն վիրաւորուած հայ հերոսներուն՝ ապահովելու բժշկական օգնութիւն, որ դեռ ընթացքի մէջ է, կարեւոր նպատակ ունենալով անգամ մը եւս յիշեցնել մարդոց գնահատելի կեանքի արժէքները:

Ներկաներուն ուրախ տրամադրութեամբ սկսաւ համերգը: Շարունակաբար, երգով ու նուագներով բեմ բարձրացան հետեւեալ աշակերտները՝ Ալիանա Աթթա, Անն Ծերահեան, Արփի եւ Լիլիթ Աբրահամեաններ, Քաթրին Մատոյեան, Դաւիթ Պոյաճեան, Վիթթօրիա Կոլենթիսի եւ Արջուն Զինտալ:

Անահիտ Կուստուզեանի կատարմամբ հնչեցին «The Rose» եւ իր ստեղծագործութիւններէն մէկը՝ «Իմ հայրիկ»ը: Բոլոր կատարումները հաճելի եւ սրտայոյզ էին: Համերգը աւարտեցաւ բուռն ծափահարութեամբ եւ ներկաներուն բարձր տրամադրութեամբ:

Վանգուվըրի մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ ԳԵՄ-ի «Ա. Շիրակեան» մասնաճիւղի սեմինար



21, 22 Յունիս 2024 -ի շաբաթավերջին Վանգուվըրի Հայ կեդրոնէն ներս, տեղւոյն ՀՅԴ Գանատայի «Արշալիր Շիրակեան» երիտասարդական միութեան մասնաճիւղի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ երկօրեայ դաստիարակչական սեմինար մը:

Սեմինարի դասախօսներն էին ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ Թիթար Քօչքերեան եւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Մոսիկ Արզումանեան եւ «Ա. Շիրակեան» մասնաճիւղի անդամ Կարօ Եղիայեան:

Ելոյթ ունեցան նաեւ տեղւոյն «Սիմոն Վրացեան» կոմիտէի անդամները:

Սեմինարի աւարտին տեղի ունեցաւ երիտասարդականի եւ կոմիտէի անդամներուն մասնակցութեամբ հաւաք-խրատական, որուն ընթացքին ազգային եւ յեղափոխական երգերով ընկերները միասին ոգեշնչող ժամեր անցուցին եւ հնչեցուցին «Հայ, Հայաստան, Հայրենիք ու Աստուած»՝ Տաւուշի սրբազան շարժման ու սրբազան պայքարին լողունները՝ առ ի զօրակցութիւն անոր:

ՀՅԴ ԳՊՄ վարիչներու վերաորակաւորման սեմինար



Յունիս 7-9 շաբաթավերջին ընթացքին, Օնթարիոյի մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան վարիչներու վերաորակաւորման սեմինարը, մասնակցութեամբ Գանատայի տարբեր շրջաններէն ժամանած աւելի քան 25 վարիչներու եւ Ընդհանուր Վարիչ Մարմինի 5 անդամներու:

Սեմինարին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյեան: Այս շաբաթավերջին վերաորակաւորման կազմակերպութեամբ զբաղուող յանձնախումբին պատասխանատուն՝ վարիչներուն բացատրեց սեմինարին նպատակը, անոնց բաժնեց անհատական թղթապանակներ եւ ներկայացուց սեմինարին օրակարգը:

Երեք օրերու ընթացքին, նախահաշիւի պատրաստութեան նման (budget planning - ընկ. Սեւակ Քիւփէշեան) գործնական աշխատանոցներուն զուգահեռ՝ վարիչները ունկնդրեցին դաստիարակչական դասախօսութիւններ: Անոնց փոխանցուեցան հետեւեալ նիւթերը - «Ընկերային անհամաձայնութիւններ լուծելու միջոցներ» (ընկ. Թորոս Տիմիթեան), «Վարիչին յատկանիշները եւ ժողովական կեանք» (ընկ. Սաբօ Նոխուսեան), «Տարեկան ծրագրի պատրաստութիւն» (ընկ. Ներսէ՛ Լիպարեան), «ՀՅԴ ԳՊՄ Կանոնագիր» (ընկ. Նորա Արուշեան) եւ «Մանկավարժական միջոցներով պատրաստուած դասախօսութիւններ» (ընկ. Լորի Ապրաքեան):

Զոյգ օրերու գիշերները, վարիչները մտերմիկ մթնոլորտի մը մէջ զրուցեցին իրարու հետ, խմբուեցան խարոյկին շուրջ, երգեցին ազգային-յեղափոխական երգեր եւ զուարճացան խմբային խաղերու միջոցաւ:

Շաբաթավերջին ընթացքին, վարիչները իրարու հետ խորհրդակցելով՝ գտան իրենց հանդիպած խոչընդոտներուն համապատասխան լուծումներ, կրկին անգամ նկատեցին թէ ինչքան անհրաժեշտ եւ կարեւոր է իրենց խաղացած դերը հայրենատէր սերունդի մը դաստիարակութեան մէջ եւ վճռեցին նոր թափով շարունակել իրենց առաքելութիւնը:

Կիրակի կէսօրէ ետք սեմինարը պաշտօնապէս փակուեցաւ յիշատակներու բաշխումով եւ բոլորը խանդավառուած եւ իրենց միտքերը նոր գիտելիքներով ամբարած վերադարձան իրենց շրջանները:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմին

ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՀՅԴ «Միհրան Փափագեան» կոմիտէն բարի ապաքինում կը մաղթէ ընկեր ՎԱՀԷ ԵՐԵՅԵԱՆԻՆ:

ADVERTISE YOUR BUSINESS HERE. ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ «ՀՈՐԻԶՈՆ»Ի ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐԴԻՄԵՅԵՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ. CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

horizon HORIZON Hebdomadaire arménien Armenian Weekly. Abonnement annuel / Yearly subscription Canada. Administration / Publicité Sylva Eshramdjian-Bachekjian (General Manager). Financé par le gouvernement du Canada. Funded by the Government of Canada. Canada logo.





# ADONIS



## NOS MAGASINS

2001 Sauvé O,  
Montréal, QC H4N 3L6  
(514) 382-8606

4601 boul.Des Sources,  
Montréal, QC H8Y 3C5  
(514) 685-5050

8880 boul. Leduc,  
Brossard, QC J4Y 0G4  
(450) 656-9595

2425 boul.Curé Labelle,  
Laval, QC H7V 1R3  
(450) 978-2333

225 Rue Peel,  
Montréal, QC H3C 2G6  
(514) 905-6499

2173 St-Cathrine O,  
Montréal, QC H3H 1M9  
(514) 933-4747

3100 boul. Thimens,  
Montréal, QC H4R 0C9  
(450) 904-6789

2655 Ave. Des Aristocrates,  
Laval, QC H7E 0H3  
(450) 665-8801

7250 boul.Des Roseaies,  
Anjou, QC H1M 2T5  
(514) 493-6667

1240 Ave Eglinton O,  
Mississauga, ON L5V 1N3  
(905) 363-0707

1055 St-Laurent boul,  
Ottawa, ON K1K 3B1  
(613) 778-8883

920 boul.Maloney O,  
Gatineau, QC J8T 3R6  
(819) 317-1737

**Suivez-nous !**



[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca)

20 Ashtonbee. Road,  
Scarborough, ON M1L 4R5  
(416) 642-1515

2561 Stanfield Rd,  
Mississauga, ON L4Y 1R6  
(365) 207-0200

1700 Rue Bouvier  
Québec, QC G2K 1N8  
(581) 890-9994





**CASSANDRA I.D.A. PHARMACY**

**ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY**

**PHARMACISTS**  
**SARKIS BALIAN, BScPhm, RPh**  
**MARAL BALIAN, PharmD, RPh**  
**VARTAN BALIAN, PharmD, RPh**

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝  
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝  
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ  
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

**Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:**

**Walk-in Clinic onsite: (416) 331-9111**

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)  
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048







**Grocery Store | Bakery | Butchery | Café | Catering**



**Halal By Hand  
Fresh Meat & Poultry**



**NOW OPEN**

**Mississauga  
720 Bristol Road West,  
ON, L5R 4A5  
(905) 502 9292**

**Scarborough  
1909 Lawrence Ave East  
ON, M1R 2Y6  
(416) 755-5084**



← Scan Here To Check Out  
Our Weekly Flyer At  
[www.arzfinefoods.com](http://www.arzfinefoods.com)



← Scan Here for Our  
Catering Book At  
[www.arzfinefoods.com](http://www.arzfinefoods.com)

**For The Latest News And Deals Follow Us At:**

[www.arzfinefoods.com](http://www.arzfinefoods.com) @arzfinefoods





KAREN



BARRY



GARO



ALEX



ARLENE

K A Z A N D J I A N

ACHAT|VENTE|FINANCE



RE/MAX 3000

IMMOBILIER  
+  
HYPOTHÈQUE

514 333 3000

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU NIVEAU MONDIAL

RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS WORLDWIDE

- \*Karen Kazandjian, DA, courtier immobilier et hypothécaire agréé
- \*Barry Kazandjian, BA, courtier immobilier
- \*Garo Kazandjian, courtier immobilier
- \*Alex Kazandjian, courtier immobilier
- \*Arlene Der Ghougassian, courtier hypothécaire

RE/MAX 3000 INC. AGENCE IMMOBILIÈRE ET CABINET HYPOTHÉCAIRE